

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ
ԱՆՁԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉՆԵՐ**

Ետյան Վ.Ա., Հայրապետյան Դ.Ռ.(ԵՊՀ, Երևան, Հայաստան)

davidhaiarm@gmail.com, eva_602@yahoo.com

Ներկայացման ամս.' 30.07.2019

գրախոսման ամս.' 08.08.2019

տպագրության ընդունման ամս.' 13.09.2019

Զարգացող թվային աշխարհում ինֆորմացիոն հոսքերի դերը կարևոր նշանակություն ունի մարդկության գոյատևման համար: Մադու վարքը և ճանաչողական առանձնահատկությունները հարմարվում են տեղեկատվական նոր միջավայրին՝ հատկապես սոցիալական ցանցերին ինչպիսիք են՝ Facebook, Instagram, Twitter և այլն:

Հետազոտության գլխավոր նպատակն է բացահայտել նշանակալի կապեր մարդու մտածողության ոճերի, ինֆորմացիայի վերամշակման և սոցիալական կայքերում նրանց վարքի միջև: Հետազոտության թիրախային ռեցեպիենտներ են հանդիսացել 18-ից 30 տարեկան հայ երիտասարդները: Հետազոտման համար կիրառվել են հատուկ կազմված հարցարան սոցիալական կայքերում մարդու վարքը բացահայտող, Հարիսոն Ա.Ֆ., Բրեյնսոն Բ.Մ. «Մտածողության ոճեր» հարցարանը: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ տեղեկատվության ընտրությունը և կոնկրետ բովանդակության վրա ուշադրության կենտրոնացումը պայմանավորված է անձի մտածողության ոճով և ինֆորմացիայի վերամշակման ոճով:

Հանգուցային բառեր՝ *Ինֆորմացիայի վերամշակում, մտածողության ոճեր, ինֆորմացիոն հոսքեր, սոցիալական կայքեր, ընկալում, վարք:*

Իսնդրի տեսական վերլուծություն: Ժամանակակից հասարակության զարգացման գլխավոր գործոններից է տեղեկատվայնությունը(ինֆորմատիզացիա): Այն ազդում է հաղորդակցման տարբեր մակարդակների վրա և ձևավորում յուրահատուկ տեղեկատվական ոլորտ: Վերջինի հիմնական նպատակն է ինֆորմացիան հասանելի դարձնել յուրաքանչյուրին նրանց հարմար վայրում և ժամանակին:

Ինֆորմացիա տերմինը ծագել է լատիներեն «informatio» բառից, ինչը նշանակում է պարզաբանում և, ըստ էության, ենթադրում է որոշակի երկխոսություն, որտեղ կան ուղարկող և ստացող կողմեր [5]:

Հաճախ տեղեկատվություն և հաղորդակցում բառերի հետ կարելի է հանդիպել՝ ցանցային, թվային, էլեկտրոնային, դիգիտալ ածականները, որոնք բնորոշում են հաղորդակցական և ինֆորմացիոն հոսքերի տեսակը, դրանց դերը և առանձնահատկությունները:[3]

Թվային կամ ինչպես շատ հաճախ են անվանում վիրտուալ դիսկուրսը ի հայտ է եկել համակարգչային տեխնիկայի զարգացման արդյունքում: Այն իր մեջ պարու-

նակում է հաղորդում և պատմում, հաստատում և դիտարկում, փաստարկում և ապացուցում այսինքն խոսքի բոլոր ոճերը արտացոլվում են տվյալ դիսկուրսում: [4] Այսպիսով, տվյալ դիսկուրսը կարելի է սահմանել որպես տեքստերի ամբողջություն, որը միավորված է համացանցի միջոցով և իրացվում է արհեստականորեն ստեղծված թվային հաղորդակցական միջավայրում, որտեղ կարող են հեռահար ինտերակտիվ կերպով շփվել կոմունիկանտները: Թվային դիսկուրսի քրոնոտոպը սահմանափակված է տեխնիկական հնարավորություններով՝ համացանցի համակարգչի կամ հեռախոսի կամ այլ գաջետի առկայություն, և մարդկային գործոնով՝ գրուցակցի օնլայն վիճակում լինել կամ չլինելը: Սակայն լինելով արհեստականորեն ստեղծված տվյալ դիսկուրսը չունի ժամանակային և տարածական սահմաններ: Երկու և ավելի գրուցակիցների շփման հնարավորությունը աշխարհի տարբեր կետերից վերացնում է պետական, տնտեսական, մշակութային քաղաքական և ազգային սահմանները: Համացանցային դիսկուրսը կարող է լինել պասիվ՝ նորությունների դիտում, բեռնում և այլն, և ակտիվ՝ բուն հաղորդակցում, գրառումներ, մեկնաբանություններ և այլն: Այսպիսով, թվային դիսկուրսի հիմնական տարբերակիչ նշաններն են՝ Թվային ազդանշանը, որպես շփման ալիք, հեռահարություն՝ առանձնացվածություն ժամանակի և տարածության մեջ, միջնորդավորվածություն՝ հնարավոր է իրականացնել միայն տեխնիկական միջոցների առկայությամբ, ցանցային կառուցվածք՝ մասնակիցների հնարավորությանն է միևնույն հեշտությամբ շփվել միմյանց հետ, անկախ սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոններից: Խոսքի տարբեր ոճերի և դիսկուրսների համակցումները, յուրահատուկ համակարգչային էթիկան [2]:

Փորձարարական հետազոտության կառուցվածքը: Հետազոտության ընտրանք են կազմել 18-30 տարեկան հայ երիտասարդները՝ 60 մասնակից: Հետազոտության մեթոդն է՝ թեստավորում, հարցաթերթ: Ընտրված մեթոդիկաներն են՝ Հարրիսոն, Բրեյնսոնի «Մտածողության ոճերը» [1], Ինչպես նաև հատուկ կազմված հարցարան՝ ուղղված սոցիալական ցանցերում ինֆորմացիայի ընկալման և կառավարման բացահայտմանը:

Տվյալների վերլուծություն և մեկնաբանություն: Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ կա նշանակալի կապ անձի մտածողության ոճերի և Facebook-ում ինֆորմացիայի ընկալման՝ կոնկրետ կոնտենտի վրա ուշադրություն դարձնելու, միջև (Pearson X^2 $p=0.041$) (Տե՛ս համահարաբերակցության աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ի տվյալները մեկնաբանելիս հարկավոր է նշել հետևյալը՝ յուրաքանչյուր ոճին հատկանշական է տվյալների մշակման յուրատիպ ռազմավարություն, ինչն արտացոլվում է ինֆորմացիոն հոսքի մեջ կոնկրետ կոնտենտի ընկալմանը: Ինչպես նշվել է ռազմավարություն, ինչն արտացոլվում է ինֆորմացիոն հոսքի մեջ կոնկրետ կոնտենտի ընկալմանը: Սինթետիկ ոճի յուրահատկությունն է նորի ստեղծումը, հաճախ հակադիր և անհամատեղելի հայացքների և գաղափարների համատեղումը, մտավոր գիտափորձերը: Սինթետատորները ձգտում են ստանալ հնարավորինս ընդլայնված հարացույց, որը թույլ կտա միավորել տարբեր մոտե-

ցումները, ազատվել հակասություններից, հաշտեցնել հակադիր դիրքերը: Իսկ գի-
ֆը որպես կոնտենտ ինքնին ինտեգրատիվ է և պահանջում է որոշակի ինֆորմացի-
աների համադրման ունակություն այն ամբողջական ընկալելու համար: Հետևաբար
կարելի է խոսել այս փոխկապվածության մասին: Իդեալիստական ոճին բնորոշ
առանձնահատկություններից ելնելով հետաքրքիր է նշել, որ չնայած մեմը ամենա-
քիչն է դիտվում, այնուամենայնիվ տվյալ ոճը կենտրոնացնում է ուշադրությունը,
քանի որ անհրաժեշտ է ինտուիտիվ և այլընտրանքային մոտեցում: Պրագմատիկ
մտածողության ոճին բնորոշ ու հաճախ կիրառվող փորձի և սխալի մեթոդը, արտա-
ցովում է նաև ինֆորմացիոն հոսքում կոնտենտների ընկալման մեջ, քանի որ միակ
ոճն է, որն ուսումնասիրում է բոլոր տեսակի կոնտենտ, կարելի է հետևություն կա-
տարել, որ դա կատարվում է հնարավորինս տարբերակներից ամենաարդյունավե-
տը գտնելու համար: Վերլուծական ոճը առավել կենտրոնանում է նկարների և գի-
ֆերի վրա, ինչը ցույց է տալիս հնարավորինս կարճ ժամանակում հնարավորինս
շատ ինֆորմացիա ստանալու մասին: Ինչ վերաբերում է իրատեսական մտածողու-
թյան ոճ ունեցող մարդկանց , հարկավոր է նշել, որ հավասարապես ուշադրություն
են դարձնում նկարներին և այլ մարդկանց գրառումներին, ինչը ցույց է տալիս ան-
միջական կապը վիզուալ փորձի և փաստացի տեղեկության վրա հիմնվելու և կոն-
տենտ ընտրելու միջև:

Աղյուսակ 1.

Անձի մտածողության ոճերի և Facebook-ում նորությունների պատին հեքլեյիս ուշադրություն դարձվող կոնտենտի համահարաբերակցության սանդղակ

Մտածողության ոճեր	Facebook նորությունների պատ՝ կոնտենտ						Ընդհա նույր
	Նկարներ	Գիֆեր(Gif)	Վիդեոներ	Այլ մարդու երկար գրառում	Մեմեր	Այլ	
Սինթետիկ ոճ	2%	6%		2%		2%	12%
Իդեալիստական ոճ	4%				2%		6%
Պրագմատիկ ոճ	6%	4%	6%	2%	2%	2%	22%
Վերլուծական ոճ	24%	12%		4%		6%	46%
Իրատեսական ոճ	6%			6%		2%	14%
Ընդհանուր	42%	22%	6%	14%	4%	12%	100%

Տվյալների վերլուծության արդյունքում, բացահայտվել է նաև փոխկապակցվա-
ծություն մտածողության ոճերի և Facebook սոցիալական ցանցում վարքային ռազ-
մավարության՝ ինֆորմացիան հավանելու, դետերմինանտների միջև (Pearson X²,
p=0.30) (Տե՛ս աղյուսակ 2):

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մտածողության բոլոր ոճերին բնորոշ է հավանել ֆեյսբուքյան գրառումը, եթե այն արտահայտում է անձի մտքերն ու զգացումները, հետաքրքիր է այն փաստը, որ իդեալիստական մտածողության ոճ ունեցող անձանց համար առհասարակ միայն գրառման մտքերի ու զգացումների արտահայտման փաստն է հանդիսանում պատճառ գրառումը հավանելու համար:

Նաև կարող ենք տեսնել, որ այն փաստը, թե ում կողմից է կատարվել կոնկրետ գրառումը, ազդում է միայն պրագմատիկ մտածողության ոճ ունեցող անձանց վարքի վրա: Ինչ վերաբերում է սինթետիկ մտածողության ոճ ունեցող անձանց, ապա նրանց մոտ նկատվում է վարքի բազմազանություն, ինչպես նաև այն, որ հավանելը պայմանավորված չէ տվյալ գրառումը կատարող անձով:

Աղյուսակ 2.

Անձի մտածողության ոճերի և Facebook-ում վարքային ռազմավարության՝ ինֆորմացիան հավանելու, դեպերմիանստների համահարաբերակցության սանդղակ

Մտածողության ոճ	Facebook ցանցում հավանումների պատճառը					Ընդհանուր	Ընդհանուր
	Գրառումն արտահայտում է ձեր մտքերն ու զգացումները	Գրառումը կատարվել է որոշակի անձի կողմից, եթե լիներ	Սովորության համաձայն	Գրառում կատարողը նույնպես ձեր գրառումը հավանել է	Այլ		
Սինթետիկ	8%		2%	2%		12%	12%
Իդեալիստական	4%				2%	6%	6%
Պրագմատիկ	14%	4%			4%	22%	22%
Վերլուծական	38%		6%		2%	46%	46%
Իրատեսական	8%		6%			14%	14%
Ընդհանուր	72%	4%	14%	2%	8%	100%	100%

Եզրակացություններ: Թվային հարթակում՝ մասնավորապես սոցիալական ցանցերում, որտեղ անձը անընդհատ տարաբնույթ ինֆորմացիոն հոսքերի ներգործության տակ է գտնվում, նրա մոտ ձևավորվում է ինֆորմացիայի ընկալման և կառավարման նոր ռազմավարություններ և մոտեցումներ, որոնք հիմնականում պայմանավորված են տվյալ սոցիալական կայքի առանձնահատկություններով, կոնկրետ ինֆորմացիայի տեսակով և բովանդակությամբ, անձնային առանձնահատկություններով, և այլ գործոններով:

Ամենաշատ տարածում ունեցող սոցիալական ցանցում՝ Facebook-ում ինֆորմացիայի ընկալումը պայմանավորված է անձի մտածողության ոճով՝ նկարների վրա ուշադրություն առավելապես կենտրոնացնում են վերլուծական ոճ ունեցող անձինք, վիդեո կոնտենտը իր վրա կենտրոնացնում է պրագմատիկ մտածողության ոճ ունեցող անձանց:

Facebook սոցիալական ցանցում իդեալիստական մտածողության ոճ ունեցող անձանց համար գրառման մտքերի ու զգացումների արտահայտման փաստն է

հանդիսանում պատճառ գրառումը հավանելու համար, իսկ պրագմատիկ ոճ ունեցողները կարևորում են այն փաստը թե ում կողմից է կատարվել կոնկրետ գրառումը:

Գրականություն

1. **Harrison A.F., Brainson R.M.** The art of thinking. N. Y. Berkley Books, 1984.
2. **Галичкина Е. Н. and Карасик В. И.** Специфика компьютерного дискурса на английском и русском языках (на материале жанра компьютерных конференций). Diss. 2001.
3. **Горошко Е.И.** Современные интернет-коммуникации: структура и основные характеристики Интернет-коммуникация как новая речевая формация. – М.: Изд-во Наука, Изд-во Флинта, 2012. – 323с. –с.9-52.
4. **Горошко, Е. И.** (2009). Интернет-жанр и функционирование языка в Интернете: попытка рефлексии. Жанры речи, (6), 11-27.
5. **Моль А.** Теория информации и эстетическое восприятие. Москва, 1966.

“THE FEATURES OF PERCEPTION AND ANALYSING OF INFORMATION AS A REGULATORS OF PERSON’S BEHAVIOR IN SOCIAL NETWORKS”

Esoyan V.A., Hayrapetyan D.R. (YSU. Yerevan, Armenia)

In developing digital world the role of information flows are important for human existence. Human behavior and cognitive features are being adapted to the new environment of information, especially on social networks such as Facebook, Instagram, Twitter etc....

The main purpose of the research is to discover the significant connections between the styles of thinking and information processing and the behavior in the social networks. Main target of the research are young Armenian representatives of age 18 to 30. For the study we applied the questionnaire that discovered the behavior in social networks such as Facebook, Instagram and Twitter; Harrison A.F., Brainson R.M. “Thinking styles” questionnaire. The outcome of the research shows that information selection and concentrating on the certain content is due to a certain style of thinking and information processing.

Keywords: *Information processing, Styles of thinking, Information flows, Social networks, Perception, behavior.*

«ОСОБЕННОСТИ ВОСПРИЯТИЯ И АНАЛИЗА ИНФОРМАЦИИ КАК РЕГУЛЯТОРЫ ПОВЕДЕНИЯ ЧЕЛОВЕКА В СОЦИАЛЬНЫХ СЕТЯХ»

Есоян В.А., Айрапетян Д.Р. (ЕГУ, Ереван, Армения)

В развивающемся цифровом мире потоки информации имеют важную роль в существовании человека. Поведение человека и его когнитивные особенности

адаптируются к новой среде информации особенно в социальных сетях, таких как Facebook, Instagram, Twitter etc.... Главная цель исследования обнаружить связь между стилями мышления, обработкой информации и поведением в социальных сетях. Главной целевой группой исследования являются молодые люди армянского происхождения от 18 до 30 лет. Для исследования были применены анкета для обнаружения поведения в социальных сетях ,таких как: Facebook, Instagram and Twitter а также опросник Харисона Брейнсона «Стили мышления».

Результаты исследования показывают, что выбор информации и сосредоточение внимания к конкретному контенту обусловлено стилем мышления и особенностями обработки информации.

Ключевые слова: *Обработка информации, Стили мышления, Информационные потоки, Социальные сети, восприятие, поведение.*